Ռեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելմանը համայնքին և ընտանիքին աջակցություն ապահովելու

գործնական ուղեցույց հոգևոր ծառայողների համար

Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար
"Combating Gender-Biased Sex Selection in Armenia"

Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից
This project is funded by
the EUROPEAN UNION

Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

Երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելմանը համայնքին և ընտանիքին աջակցություն ապահովելու

գործնական ուղեցույց հոգևոր ծառայողների համար

Երևան 2017

Բովանդակություն

ԽՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ 5

ԽՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ 8

ԹԵ ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԳԻՐՔԸ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՎ 10

ՆԵՐԱԾԱԿԱՆ 14

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ
ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 24

Ա. ԻՆՉՈ՞Վ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԻ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 25

Բ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԻ ԱՆԱՐԴԱՐ ՈՒ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 28

Գ. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՆԽԵԼ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՐԴԱՐ ԵՐԵՎՈՒՅԹԸ 29

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ՝ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 31

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈՉԻՉ 33

ԾԻՍԱԿԱՑԱՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ՝ ԽՐԱՏՈՂ ՀԱՅՐ 35

Բ. ՍՈՒՐԲ ՊՍԱԿ 37

Գ. ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ 38

Ա. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ 40

Դ. ՏՆՕՐՀՆԵՔ 42

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ 44

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 46

Սրբուհի կոյսն յօրօրոցին,
եղեալ օրէ զԱծորդին :

Բնական չափսերը՝ 6.8X10.8սմ: Վենետիկ: տպ. Անտոնի Բորտոլիի: Սրբուհի կոյսն յօրօրոցին, եղեալ օրէ զԱ[ստուա]ծորդին: Տպագրվել է 1771թ. 20 Հունիս

ՈՍՔ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Աստվածաշունչ մատյանի ընթերցանության առաջին էջերում Աստված մեզ հայտնվում է՝ որպես արարչագործ իմաստության աղբյուր, որտեղից սկիզբ է առնում սիրո խորհրդի ճշմարիտ ընկալումը: Երկնքի և երկրի իմաստուն ստեղծագործության ավարտին Արարիչ Աստված հաստատում է ընտանիքի հասկացությունը. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան» (Ծննդ. 1.28): Հայ ազգի պատմության հազարամյակների ընթացքում, սուրբգրային պատգամներին հավատարիմ, ընտանեկան հարկը վերաճել է տաքուկ օջախի, ապա՝ ժառանգական ծուխի և սիրո սնուցող միջավայրի: Ընտանիքի ամրությունը, ներընտանեկան առողջ հարաբերությունները վավերացնում է Սրբազան մեր Եկեղեցին՝ պսակադրության սրբազան խորհրդով՝ այն անքակտելիորեն հաստատելով Տիրոջ իսկ խոսքով. «Արդ զոր զուգեաց Աստուած, մարդ մի մեկնեսցէ» (Մտթ. 19.6): Ընտանեկան հարկը ոչ միայն սիրո և երջանկության մթնոլորտ է, այլև կրթության և դաստիարակության կարևորագույն դպրոց, որտեղից ապահովվում է ազգի հոգևորապես առողջ վերարտադրողությունը: Ժողովրդագրական տեսակետից այն անվանվում է հասարակության բջիջ, որտեղից սնուցվում է ազգն իր բոլոր շերտերով, որտեղից կայանում են պետության քաղաքացիական հասարակությունը և եկեղեցու զինվորյալ հավատացյալների բանակը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, հավատարիմ իր հոգևոր առաքելությանը, 2010 թվականից սկսած, հայաստանյան և միջազգային տարբեր կառույցների հետ համագործակցաբար իրականացնում է բազմապիսի ծրագրեր հայ ընտանիքի առջև ծառացած արդի մարտահրավերների և ներընտանեկան խնդիրների լուծման ուղղությամբ՝ ուղենշելով հոգևոր լուծման ճանապարհները:

Ընթերցողին ներկայացվող սույն ձեռնարկի մտահղացումը ծագել է «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակա-

կան կազմակերպության և մեր կենտրոնի աշխատակիցների համատեղ քննարկման արդյունքում: Նպատակն է եղել պատրաստել օժանդակ մի ուղեցույց Առաքելական մեր Եկեղեցու սպասավորների համար՝ խորապես հավատալով նրանց խոսքի և ծառայության ազդեցությանը մեր ժողովրդի կյանքում: Ձեռնարկում անդրադարձ է կատարվում ժամանակակից մի վտանգավոր երևույթի, որը վերջին տարիներին Հայաստանում սկսել է լուրջ մտահոգություն դառնալ մեր հասարակության: Խոսքը երեխաների սեռով պայմանավորված խտրական և անարդար ընտրության մասին է: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին հասարակության մեջ մշտապես եղել է սոցիալական հավասարության և արդարության առաջամարտիկը, ինչպես նաև հավատարիմ է մնացել մարդկանց միջև իրավունքի և ընտրության ազատության սկզբունքներին: Սակայն նշյալ երևույթները, չմեկնաբանելով որպես ծայրահեղ սանձարձակության և անիշխանության նպաստող երևումներ հասարակության մեջ, յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի իր դերակատարության անհատականությունն այնպես, ինչպես մեր մարմնի առանձին անդամների հստակ տարբերությունները՝ մարմնի գոյության համար հավասար կարևորությամբ: Եկեղեցու սպասավորներս խոսքով և գործով կոչված ենք վկայելու Աստծո խոսքի ճշմարտությունը՝ ուղենշելով հասարակության առջև ծառացած արդի խնդիրների հաղթահարման հոգևոր ճանապարհը: Ուստի սույն ձեռնարկը տեղեկատվական փոքրիկ մի աղբյուր է, որը ուրախությամբ ներկայացնում ենք՝ որպես հոգևոր ծառայության հսկայական առաքելությանը նպաստող մի փոքրիկ մասնիկ՝ կանխելու չափազանց վտանգավոր մի երևույթ, որը մարդկային խտրական վերաբերմունքի արդյունքում տեղ գտած սեռով պայմանավորված անարդար ընտրության երևույթն է: Ձեռնարկը պատրաստվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներ Տիար Վարանդ Քորթմոսյանի և Տիկին Ելենա Հարությունյանի կողմից՝ նախատեսվելով համայնքներում ծառայող հոգևոր հովիվների, սոցիալական ոլորտի աշխատակիցների և ընթերցողների լայն շրջանակի համար:

Առ այդ, Ամենազոր Աստծո օրհնությունն ու զորակցությունն ենք մաղթում սույն ձեռնարկի պատրաստման և հրատարակման գործին նպաստ բերած բոլոր անձանց, մասնավորաբար՝ հեղինակներին, ինչպես նաև «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի աշխատակիցներին: Լիահույս ենք, որ այս աշխատանքն օգտակար կլինի խտրական ընտրության՝ վտանգավոր և անցանկալի երևույթի կանխարգելմանը մեր սիրասուն ժողովրդի կյանքում:

Արարիչ Աստված Իր իմաստության առատ շնորհները թող հեղի հայ ընտանիքի կյանքում՝ այնտեղ հարատև դարձնելով դրախտի միջավայրը

և հաստատելով արդարության ու ճշմարտության շավիղների մեջ ընթանալու ձգտումը. ամեն:

Օրհնությամբ՝

Վարդան եպիսկոպոս Նավասարդյան
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն

ՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ

Հայաստանյան հասարակության առջև ծառացած պտղի սեռի խտրական ընտրության մարտահրավերին հաջողությամբ դիմակայելու գրավականն այսօր մեր երկրում հանրային կարծիք ձևավորողների, այդ թվում՝ հասարակական-քաղաքական գործիչների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների, վերլուծական կենտրոնների և հայ եկեղեցու միջև հաստատված ռազմավարական համագործակցությունն է:

Հասարակական և հոգևոր մարտահրավերների փոթորկոտ օվկիանոսում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հայ իրականության մեջ եղել և մնում է մարդու կյանքն արժևորող ու իմաստավորող վարդապետության լույսի այն փարոսը, որի վեհաշուք փայլն ու ջերմացնող ճառագայթները դարեր շարունակ ուղղորդել են մեր ժողովրդի միտքն ու հոգին դեպի հասարակական ճգնաժամերի հանգուցալուծում, ընտանիքի, ծնելիության, առողջության, բռնության և համայնքային այլ խնդիրների հաղթահարում, և զարգացման կարևորագույն հարցերում հասարակական լայն համաձայնության կայացում:

Հայ Առաքելական Եկեղեցին առանցքային դեր է ունեցել նաև վերջին տարիներին պտղի սեռի ընտրության խնդրի շուրջ լռությունը խախտելու, պտղի սեռի խտրական ընտրության պատճառների և հետևանքների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնելու և գենդերային հավասարակշռված վերարտադրողականության և խտրականությունից զերծ մշակույթ ձևավորելու գործում:

Ձեզ ներկայացվող գործնական ուղեցույցը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի սերտ համագործակցության արդյունքում: Այն հասարակության առջև ծառացած ամենավտանգավոր մարտահրավերների հաղթահարման գործում

եկեղեցու, հասարակական կազմակերպությունների, պետական մարմինների, զարգացման միջազգային գործընկերների և շահագրգիռ այլ կառույցների միջև համագործակցությունը կամրջելու առավել արժեքավոր ջանքերից մեկն է վերջին տարիներին: Ուղեցույցի մշակումը փորձ է նաև կամրջելու աղջիկ երեխայի և կնոջ արժևորման, խտրականության բացառման խնդիրներին ուղղված ժամանակակից համաշխարհային գիտելիքներն ու սոցիալական տեսությունները, Հայաստանում վերջին տարիներին ձևավորված արդյունավետ աշխատանքի փորձը և Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետությունը:

Վստահ եմ, որ գործնական ուղեցույցը կդառնա այն գործիքը, որը եկեղեցու սպասավորներին հնարավորություն կընձեռի արդյունավետ կերպով ուղղորդել իրենց համայնքներին դեպի երեխայի սեռի խտրական ընտրության բացառումը և աղջիկ երեխայի հանդեպ խտրականության մերժումը, համայնքում և եկեղեցական ծխում կօգնի բացահայտել պտղի սեռի խտրական ընտրության վաղ ախտանշանները և կօգնի հավուր պատշաճի արձագանքել այս կործանարար երևույթի դրսևորումներին:

Արմեն Գալստյան
Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի
գործադիր տնօրեն

Ե ԽՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԳԻՐՔԸ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՎ

1. Կյանքը մարդուն շնորհվել է Աստծուց, և Աստված մարդուն կարգել է կյանքի տեր ու խնամատար: Այդ իսկ պատճառով թեև կյանքը մերն է, մենք իրավասու չենք նրան վերաբերվել կամայականորեն, այլ գիտակցելով մեր՝ կյանքի տերն ու խնամատարը լինելը՝ պետք է անենք հնարավոր ամեն ինչ՝ այն լուսաշող և աստվածահաճո դարձնելու համար՝ դրսևորելով աստվածսիրություն, բարոյական բարձր արժեքներ, հավատարմություն ընտանեկան սրբություններին:

2. Վերոնշյալ արժեքներն անկարևոր նկատելու և բացասելու դեպքում մարդու կյանքը շեղվում է իր բնական հունից՝ միտվելով կործանման, քանզի այն, լինելով հրաշալիորեն համակարգված իրողություն, կրում է նվազագույն բացթողման ու սխալ վերաբերմունքի հետևանքները, որոնք այս կամ այն կերպ ունենում են իրենց քայքայիչ ազդեցությունը:

3. Մշակութային, կրոնական, ազգային առանձնահատկություններից ելնելով՝ կյանքի նկատմամբ մարդկանց վերաբերմունքը տարբեր է: Ոմանց համար կյանքը բարձր արժեք է, ոմանք այն ավելի քիչ են կարևորում, գտնվում են նաև այնպիսինները, որոնց համար կյանքը բացարձակապես արժեք չի ներկայացնում: Ըստ այդմ, մարդիկ հաճախ անարդար վերաբերմունք են դրսևորում կյանքի նկատմամբ, քանզի չունեն նրա՝ աստվածաշնորհ և նվիրական լինելու գիտակցությունը:

4. Կյանքի նկատմամբ նման վերաբերմունք ունեցողների շրջանում է, որ հաճախ հանդիպում ենք սեռով պայմանավորված պտղի խտրական ընտրության երևույթին, որի դատապարտումը միավորում է պետությանը, եկեղեցուն ու մարդասիրական կազմակերպություններին՝ մերժելի այդ երևույթն արմատախիլ անելու նպատակով համատեղ աշխատանք ծավալելու գիտակցումով: Եկեղեցին տարբեր առիթներով անդրադարձել է այս խնդրին՝ դատապարտելով երևույթը և փորձելով այն հաղթահարելու ուղիներ գտնել: Եկեղեցու դերակատարությունն այս առումով կարևորվում է այնքանով, որ հավատավոր ժողովուրդն արժեքային հարցերում դիմում է եկեղեցուն և հոգևորականին՝ ուղղորդում ակնկալելով իրենց մտահոգող խնդրի առնչությամբ:

5. Սեռով պայմանավորված պտղի խտրական ընտրությունը վտանգավոր երևույթ է, որի կանխումն առաջնային նշանակություն ունի, քանզի այն ուղղված է ոչ միայն մի անմեղ և անպաշտպան էակի կյանքի իրավունքի, այլև Աստծու դեմ, ով շնորհում է այդ կյանքը:

6. Ավաղ, խոտելի այս երևույթը, որ առկա է մի շարք երկրներում, ծավալում է գտել նաև Հայաստանում՝ սկսած դեռևս 2000 թվականից՝ բացասական ազդեցությամբ սպառնալով ինչպես առանձին ընտանիքներին, այնպես էլ ողջ հասարակությանը:

7. Նկատի ունենալով երևույթի աղետալի հետևանքները՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2015թ. մայիսի 13-ին համատեղ հրամանով հաստատել են «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը»: Նույն թվականի մայիսից Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ-ն (ՄԶՄԿ), համագործակցելով «Սեյվ դը Չիլդրեն Նիդերլանդներ» կազմակերպության, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի (ԱԶԿ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի (ՄԿՀԽ) և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնըլ» կազմակերպության (ՍԴՉ) հետ, Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ իրականացնում է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրը, որի շրջանակներում փորձի և գիտելիքների փոխանակման ցանցին անդամակցել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևորականներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցները:

8. Ծրագրի ընդհանուր նպատակը, որը Հայաստանում երեխայի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը նպաստելն է, իրականացված տեսնելու համար անհրաժեշտ էր վերհանել և հասկանալ այն պատճառները, որ առաջ են բերել այդ երևույթը, պարզել այն հանգամանքները, որ նպաստում են երևույթի տարածմանը և, վերջապես, գտնել այն կանխելու հնարավոր բոլոր արդյունավետ ուղիները:

9. Ուսումնասիրությունների արդյունքում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հիմնական պայման են դիտարկվում՝

   ա. տղայի համեմատությամբ աղջիկ երեխայի նվազ արժևորումը,

   բ. վերարտադրողական առողջության և ախտորոշման տեխնոլոգիաների մատչելիությունը,

   գ. ծնելիության ցածր մակարդակը:

10. Տղայի համեմատությամբ աղջիկ երեխայի նվազ արժևորումը տարբեր երկրներում պայմանավորված է հասարակության մեջ կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքով, ինչը տարբեր դրսևորումներ ունի: Օրինակ, եթե մի երկրում տղա երեխա ունենալու նախապատվությունը պայմանավորվում է պապենական ժառանգության պահպանությամբ կամ ազգանվան շարունակությամբ, մեկ այլ երկրում պայմանավորվում է աղջկա համար տրվող օժիտի ծանրությամբ:

11. Վերարտադրողական առողջության և ախտորոշման տեխնոլոգիաների մատչելիությունը նպաստում են երևույթի տարածմանն այնքանով, որ հղիության վաղ շրջանում հնարավոր է դառնում իմանալ երեխայի սեռը և կատարել խտրական ընտրություն:

12. Եվ, ի վերջո, եթե ծնելիության մակարդակը ցածր է, երեխաների սահմանափակ թվի պարագայում առաջ է գալիս ցանկալի սեռի երեխա ունենալու ցանկությունը:

13. Այս գիրք-ուղեցույցը նպատակ ունի հնարավորինս հստակ, պարզ և հիմնավորված օրինակներով գործնական միջոցներ առաջարկել համայնքներում իրենց ծառայությունը բերող հոգևորականներին՝ արդյունավետ կերպով ուղղորդելու այն հավատացյալներին, որոնք բախվել են կամ կարող են բախվել այս երևույթին՝ նպաստելով հոգևոր և

բարոյական արժեքներին հավատարիմ ընտանիքի կազմությանն ու կայացմանը:

14. Աստվածային արարչությունից ի վեր՝ տղամարդն ու կինն ապրում են միասին՝ կողք-կողքի, Աստծու ստեղծած աշխարհում: Ֆիզիկապես միմյանցից տարբեր էակներ լինելով հանդերձ՝ տղամարդն ու կինն անբաժանելի մասնիկներ են, որոնք առանձնաբար չեն կարող ապահովել գոյության շարունակականությունը, քանզի մեկը ամբողջացնում է մյուսին, մեկի գոյությամբ պայմանավորվում է մյուսի գոյությունը: Այսպիսով, դարեր շարունակ տղամարդն ու կինը, միմյանց լծակից լինելով, ապրել են, միասնաբար պայքարել ու կերտել իրենց կյանքն ու միջավայրը: Հասարակության մեջ, սակայն, կնոջ դերը հաճախ թերագնահատվել է:

15. Հատկանշական է, որ քրիստոնեությունը կնոջ դերի՝ ժամանակի համար նոր ընկալում է առաջ բերում՝ շեշտելով նշանակությունն ընտանեկան և հասարակական կյանքում:

16. Արդարև, ըստ քրիստոնեության «տղամարդ և կին քրիստոնեական կոչում ունեն միասին խորհելու և միասին ապրելու՝ մեկը մյուսի համար: Եկեղեցու այս վարդապետության համաձայն, ամուսնացած զույգը չի կարող պտղալից ձիթենու պես տնկվել Եկեղեցու անդաստանում, չի կարող որդեծնության աստվածադիր հրամանը և պատգամը ճիշտ իրագործել, եթե միասիրտ և միախորհուրդ չէ: Ուրեմն տղամարդու և կնոջ դերակատարությունը քրիստոնեական պսակի մեջ որդեծնությունից առաջ այդ միությունը ճշմարիտ և անարատ սիրո վրա հիմնելն է» (Գարեգին Ա, «Զրույցներ Ջովաննի Գուայտայի հետ»): Հետևաբար, առաջին հերթին տղամարդն ու կինն

իրար հարգելով պիտի ստեղծեն այդ միությունը, ուր տիրում է հավասարություն:

17. Այդ միությունից բխած վեհ ու ազնիվ առաքելությունն է սերնդագործությունը՝ այլ խոսքով՝ Աստծու սկիզբ դրած ստեղծագործության շարունակող լինելը: Աստված արարչության վեցերորդ օրը ստեղծեց մարդուն՝ երկրի հողից, և ապա նրա կողոսկրից ստեղծեց կնոջը՝ նրան անվանելով Եվա, որ նշանակում է կյանք: Եվ Աստված ասաց նրանց. «Աճեցէ՛ք, բազմազէ՛ք, լցրէ՛ք երկիրը, տիրեցէ՛ք դրան, իշխեցէ՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ» (Ծննդ. 1.28): Այստեղ հստակ է, որ Աստված խտրություն չի դնում տղամարդու և կնոջ միջև, այլ նրանց երկուսին ուղղելով իր խոսքը՝ հավասար իշխանություն է տալիս նրանց՝ «աճելու, բազմանալու, երկիրը լցնելու և տիրելու դրան»:

18. Ծննդոց գրքի այս համարում առաջին անգամ հանդիպում ենք նաև ընտանիքի գաղափարին: Արդարև, ընտանիքը կազմվում է այր ու կնոջով, որոնց ամուսնության արդյունքում ծնվում են զավակներ՝ իրագործելով սերնդագործության աստվածային պատգամը, որ շարունակվում է փոխանցվել բոլոր պսակվող զույգերին:

19. Իսկ «ամուսնական կյանքում սեր և համերաշխություն պահպանելու համար դերերի տեղաբաշխման մեջ չի կարող որևիցե տարբերություն լինել…: Ուրեմն, և ամուսնական անկողինը սուրբ է, ամուսնական հարաբերությունների մեջ էլ կին և տղամարդ հավասարապես են կիսում պարտավորություններն ըստ Պողոս առաքյալի խոսքերի. «Թող մարդը կնոջ հանդեպ իր պարտքը կատարի, նույն ձևով և կինը՝ իր մարդու հանդեպ, որովհետև կինն իր մարմնի տերը չէ, այլ մարդը: Նույնպես և մարդն իր մարմնի տերը չէ, այլ՝ կինը: Մի՛ զրկեք միմյանց, այլ միայն այն դեպքում, եթե միառժամանակ համաձայն եք, որ աղոթքի նվիրվեք. և վերստին միմյանց դարձեք, որպեսզի սատանան ձեզ չփորձի ձեր անժուժկալության պատճառով (Ա. Կորնթ. 7.3-5):

20. Ուստի, այր և կին լինելով մեկ՝ Սբ. Պսակի խորհրդի ժամանակ, իրենց ողջ կյանքը պատրաստվում են միասին անցկացնել: Իսկ այդ մեկի միությունը իր մեջ ունենում է բազմանալու և աճելու հատկությունը, որը իրականանում է սերնդագործությամբ: Այսպիսով կազմվում է ընտանիքը, որի հիմքում լինում են ծնողները՝ այր և կին, և նրանց շուրջ իրենցից ծնված զավակները, որոնք իրենց հերթին աճելով, դառնա-

լու են հետագա ընտանիքների հիմքը, իրենք ևս մասնակից լինելով Աստծու ստեղծագործության՝ սերնդագործության միջոցով:

21. Ընտանիքը, հետևաբար, նվազագույնը երկու անհատներից կազմված ամբողջությունն է, որտեղ յուրաքանչյուր անհատ ունի իր պարտավորությունը: Ընտանիքը առողջ ու կատարյալ է, երբ այնտեղ տիրում է ուրախություն, հոգևոր ու բարոյական արժեքների գիտակցում, աստվածանմանության ձգտում, Աստծո ստեղծագործության շարունակողը լինելու փափագ: Երբ ընտանիքում այս մթնոլորտն է տիրում, նշանակում է՝ այնտեղ հաստատված է նաև սիրո, համերաշխության ու ներդաշնակության մթնոլորտ, ուր բոլորն էլ գիտակցում են իրենց ունեցած պարտավորություններն ու պատասխանատվությունը:

22. Երբ առողջ է ընտանիքը, առողջ է նաև հասարակությունը: Ընտանիքը մեր կյանքի կենտրոնն է, մեր հասարակության, մեր ազգի պահպանության կարևոր կռվաններից մեկը, և իզուր չէ, որ այն նաև հասարակության բջիջն է անվանվում, և եթե այդ բջիջն առողջ է իր հոգևոր կառույցով, անպայմանորեն հասարակությունն էլ հավաքական իմաստով առողջ է լինում:

23. Ընտանիքում, ինչպես ասացինք, յուրաքանչյուրն ունի իր պարտավորությունը: Այսպես, այր և կին համահավասար պարտավորություն և պատասխանատվություն ունեն իրենց ընտանիքում: Բնականաբար, այդ պարտավորությունները հաճախ տարբերվում են, սակայն ձգտում են միևնույն նպատակին՝ ընտանիքի հոգևոր բարօրությունն ու նյութական բարեկեցությունն արդարությամբ ապահովելուն: Ամուսինները պետք է գիտակցեն նաև, որ իրենք համահավասար պարտավորությունն ունեն իրենց զավակներին դաստիարակելու գործում:

24. Սխալ է այն կարծիքը, թե «մայրն (կինն) է միայն զավակներին դաստիարակողը, իսկ հայրը (տղամարդը) կոչված է ապահովելու ընտանիքի բարեկեցությունը»: Մեկ այլ կարծրատիպային կարծիքի համաձայն կնոջ դերը սահմանափակվում է տնային տնտեսուհու պարտականություններով: Ի պատասխան կարող ենք հաստատապես ասել, որ Աստված տարբերություն, առավել ևս խտրություն և մեծ ու փոքրի խնդիր չի դնում, չի՛ առանձնացնում մեկին կամ մյուսին. տղամարդն ու կինը Աստծու համար նույն արժեքն ունեն, ուստի ունեն նաև համահավասար իրավունքներ, որոնք պայմանավորվում են, սակայն, փոխադարձ հարգանքով:

25. Իհարկե, չենք կարող բացառել բնականորեն առկա տարբերությունները՝ ֆիզիկական, իրավիճակներին դիմակայելու, մոտեցումների և այլն, որոնք, սակայն, ոչ թե ընդգծում են մեկի գերակայությունը մյուսի նկատմամբ, այլ ևս մեկ անգամ վկայում են, որ այդ տարբերությունների առկայությամբ էլ տղամարդն ու կինն ամբողջացնում են իրար՝ հիրավի կերտելով միություն:

26. Ընտանիքն օրինակելի է, երբ այնտեղ թագավորում է սերը, երջանկությունը, համերաշխությունն ու ներդաշնակությունը: Երբ այս արժեքները կրող ընտանիքը համալրվում է զավակներով, սիրո և երջանկության մթնոլորտը կրկնապատկվում է՝ անկախ երեխայի սեռից:

27. Մարդը կոչված է Աստծու ստեղծագործության շարունակողը լինելու, ինչն իրագործվում է սերնդագործությամբ: Սակայն, երբ սերնդագործության մեջ տեղ է գտնում մարդկային միջամտությունը, բնական ընթացքը խաթարվում է՝ առաջ բերելով բազմաթիվ չարիքներ ու ավերներ:

28. Այսպիսով, երբ որոշ ծնողներ սեռի խտրական ընտրության արդյունքում ընդհատում են հղիությունը, հակառակվում են նախ Աստծուն և ապա՝ բնության օրենքներին: Ինչպես նշեցինք, աշխարհի տարբեր երկրներում տարբեր պատճառներով են մարդիկ դիմում հղության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատման: Այս երևույթի զոհերը հիմնականում աղջիկ երեխաներն են:

29. Սեռով պայմանավորված հղիության ընդհատման բազմաթիվ պատճառներից մեկն այն է, որ մի շարք երկրներում տղա զավակ չունենալը հավասարազոր է նկատվում անպատվությանն ու անարգանքին: Մի այլ պատճառն այն է, որ տղա երեխան ավելի հաջողակ է արտաքին աշխարհում՝ հատկապես ընտանիքին նյութապես ապահովելու և աշխատանքում բարձունքների հասնելու առումով: Բնականաբար, նման մոտեցումները սխալ և մերժելի են նախևառաջ բարոյական արժեքների տեսանկյունից, երկրորդ՝ դրանք հակառակ են Աստծո նախախնամությանը և վերջապես՝ առաջ են բերում ֆիզիկական և հոգեբանական բացասական ազդեցություններ, որոնք կարող են անդառնալի կերպով վտանգել կնոջ առողջությունը:

30. Այս ամենը հանգեցնում են համոզմունքի, որ անկախ բոլոր հանգամանքներից և ստեղծված իրավիճակներց՝ զույգերը չպետք է խտրական մոտեցում ցուցաբերեն իրենց երեխայի սեռի նկատմամբ՝ քաջ

գիտակցելով, որ յուրաքանչյուր երեխա՝ տղա, թե աղջիկ, նախևառաջ Աստծուց շնորհված պարգև է և ինչ-որ կոչում ունի այս կյանքում: Նախապաշարմունքներից ելնելով երեխայի ծնունդը բացասելը նշանակում է արգելք հանդիսանալ մի բարիքի, որ մարմնավորվելու էր ի դեմս այդ երեխայի:

31. Ավելին, ինչպես արդեն նշեցինք, տղան ու աղջիկը շարունակողն են իրենց ծնողների՝ Աստծուց տրված առաքելության՝ սերնդագործության՝ համահավասար իրավունքներ ունենալով ապրելու, քանզի նրանցից մեկի բացակայությամբ չի կարելի պատկերացնել կյանքի հարատևությունը:

32. Անդրադառնալու համար հասարակության մեջ տղամարդու նկատմամբ կնոջ դերի նվազ կարևորության մտայնությանը, փորձենք հասկանալ՝ ինչպիսի՞ն է կանանց դերակատարությունը Աստվածաշնչում և հայոց պատմության հոլովույթներում:

33. Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, Աստված տղամարդուն ու կնոջը հավասար ստեղծեց՝ առանց դերային տարբերությունների կամ խտրականության: Հաջորդիվ Աստվածաշնչում հաճախ հանդիպում ենք հատվածների, ուր առանձնակի կերպով նշվում են տղամարդու և կնոջ դերակատարությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողության ակնկալվող կերպերը և այլն: Այսինքն, Աստծո կողմից հավասարությամբ ստեղծված լինելով՝ միևնույն ժամանակ յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ առաքելությունն ու դերակատարությունը:

34. Աստվածաշնչում կարդում ենք, որ Աստված մարդուն ստեղծելիս, ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրայ սողացող բոլոր սողունների վրայ: Եւ Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց» (Ծն 1.26-27): Հստակ տեսնում ենք՝ թե տղամարդուն և թե կնոջ Աստված ստեղծեց իր կերպարանքով ու նմանությամբ՝ օժտելով նույն ու հավասար իրավունքներով:

35. Սակայն Աստվածաշնչում՝ հատկապես Հին Կտակարանում, ականատես ենք լինում այն իրողության, որ կինը հաճախ անտեսվել ու տղամարդուց նվազ արժեք է ներկայացրել, ինչն արդյունքն ու ազդեցությունն է հին աշխարհում տիրող մտածելակերպի ու մշակույթի:

Հինկտակարանյան միջավայրում և մտածելակերպում հոր կերպարը միշտ գերիշխող է եղել, իսկ կինը երկրորդական է նկատվել՝ իբրև ծննդաբերող և տնայնագործ՝ չվերապահելով նրան հասարակական որևէ գործունեություն: Ու թեև Հին Կտակարանի գրքերի հեղինակները զերծ չեն մնացել ժամանակի ազդեցությունից, կանանց ունեցած կարևոր դերակատարության բազում վկայությունների ենք հանդիպում այստեղ՝ հիմնականում իբրև ամուսինների լծակից:

36. Բերենք մի քանի օրինակներ.

ա. «Տէր Աստուած ասաց. “Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանութեամբ մի օգնական ստեղծենք նրա համար”» (Ծն 2.18):

բ. Ադամի կողքին տեսնում ենք Եվային, ում միջոցով կյանքի գոյատևությունը սկիզբ առավ: Կարդում ենք. «Ադամը պառկեց իր կին Եւայի հետ, սա յղիացաւ, ծնեց Կայէնին ու ասաց. “Մարդ ծնեցի Աստծու զօրութեամբ”: Դրանից յետոյ նա ծնեց նրա եղբայր Աբէլին: Աբէլը դարձաւ ոչխարների հովիւ, իսկ Կայէնը հող էր մշակում» (Ծն 4.1-2):

գ. Աբրահամի կողքին տեսնում ենք Սառային, ում միջոցով ապահովեց Աբրահամի սերնդի գոյությունը: Կարդում ենք. «Սառան յղիացաւ ու Աբրահամի համար ծեր տարիքում որդի ծնեց ճիշտ այն ժամանակ, ինչպէս Աստուած յայտնել էր Աբրահամին» (Ծն 21:2):

դ. «Պատուի՛ր քո հօրն ու մօրը, որպէսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրայ, որ Տէր Աստուած տալու է քեզ» (Ելք 20.12):

ե. Հրեաների պատմության մի հատվածում տեսնում ենք Եսթեր անունով մի կին, ով շատ կարևոր դերակատարություն է ունենում Հրեա ժողովրդի կյանքում (կարդալ Եսթերի գիրքը):

զ. «Եւ պիտի լինի սրանից յետոյ, վերջին օրերին, - ասում է Աստուած,- որ իմ Հոգուց պիտի թափեմ ամէն մարդու վրայ, եւ ձեր որդիներն ու դստրերը պիտի մարգարէանան. ձեր երիտասարդները տեսիլներ եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն» (Գրծ 2.17):

է. «Յաջորդ օրը այնտեղից դուրս գալով՝ եկանք Կեսարիա եւ, մտնելով տունը Փիլիպպոս աւետարանչի, որ եօթը սարկաւագներից մէկն էր, օթեւանեցինք նրա մօտ: Նա ունէր չորս կոյս ղջիկներ, որոնք մարգարէուհիներ էին» (Գրծ 21.8-9):

ը. «Պառաւ կանայք նոյնպէս լինեն զգաստ եւ սրբերին վայել վարմունք ունենան. ոչ բանսարկու, ոչ գինեմոլ, այլ՝ բարեխրատ, որ խրատեն դեռատի կանանց՝ սիրելու իրենց մարդկանց, լինելու որդե-

Բնական չափսերը՝ 6.7x10.7սմ։ Վենետիկ։ տպ. Անտոնի Բորտոլիի։ Սրբուհի կոյս զշնորհ գործունեաց, յա[տուա]ծորդոյդ վասն իմ հայեաւ։ Տպագրվել է 1771թ. 20 Հունիս

սէր, խոհեմ, մաքրակենցաղ, տնարար, բարեգործ, հնազանդ իրենց մարդկանց, որպէսզի Աստծու խօսքը եւ վարդապետութիւնը չանարգուի» (Տիտ 2.3-5):

37. Նոր Կտակարանում կանանց հանդեպ վերաբերմունքը հիմնովին փոխված և բնական հունի մեջ ընկած ենք գտնում: Հիսուս Քրիստոսն աշխարհ գալով մարդկանց մտածողությունը մաքրագործեց և սերմանեց բարոյական բարձր արժեքներ: Պողոս առաքյալի՝ հռոմեացիներին ուղղած նամակում կարդում ենք. «Յանձնարարում եմ ձեզ Փիբէին՝ մեր քրոջը» (Հռ 16.1): Գաղատացիներին ուղղած նամակում կարդում ենք. «Ուրեմն խտրութիւն չկայ, …ո՛չ արուի եւ ո՛չ էգի. որովհետեւ դուք ամէնքդ մէկ էք ի Քրիստոս Յիսուս» (Գղ 3.28): Տեսնում ենք, որ Քրիստոսի համար խտրություն չկա, այլ բոլորն էլ մեկ են՝ ի Քրիստոս Հիսուս: Քրիստոսի մեջ ընդհանրապես վերանում է հակառակությունն ու խտրականությունը տղամարդու և կնոջ միջև:

38. Քրիստոսն իր երկրավոր կյանքում ևս տարբերություն չդրեց տղամարդու և կնոջ միջև: Ավետարաններում կարդում ենք, թե ինչպես Մարիամ Մագթաղենացու մեղքերին թողություն է շնորհում՝ նրան առաջնորդելով վերանորոգված կյանքի (տե՛ս Հվ 8.1-11): Տեսնում ենք, թե ինչ մտերմությամբ է վերաբերվում իրենց եղբորը՝ Ղազարոսին կորցրած քոյրերին՝ Մարիամին և Մարթային (տե՛ս Հվ 11.1-46): Խաչի վրայից նախքան իր հոգին ավանդելը իր մոր՝ Մարիամի խնամքը հանձնում է իր սիրելի աշակերտին՝ Հովհաննեսին (տե՛ս Հվ 19.25-27): Ավելին, հարությունից հետո առաջին անգամ Հիսուս երևում է Մարիամ Մագթաղենացուն (տե՛ս Հվ 11.11-18):

39. Սակայն միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այս ամենը չի նշանակում, որ Քրիստոս կանանց գերադասում է տղամարդկանցից, այլև այս վերաբերմունքից հստակորեն ցույց է տալիս, որ Քրիստոսի համար տղամարդու և կնոջ միջև խտրություն չկա, Նրա համար բոլորն էլ հավասար են:

40. Անդրադառնալով հայ ժողովրդի պատմությանը՝ կանանց ներկայությունն ու ունեցած զգալի և նշանակալի ազդեցությունն ակնհայտ երևում է պատմության էջերում: Արդարև, պատմիչները հայ թագավորների և իշխանների կողքին հիշատակում են այնպիսի կանանց՝ թագուհիներ ու իշխանուհիներ, որոնք իրենց կանացիությամբ հանդերձ, հաջողել են ոսկյա տառերով իրենց անուններն արձանագրել

հայոց պատմության էջերում՝ ամրագրելով իրենց անուրանալի ներդրումը հայ ժողովրդի՝ հավերժին ձգտող ընթացքում:

41. Հայր Վարդան վրդ. Հացունին իր «Հայուհին պատմության առջև» աշխատասիրության մեջ նշում է. «Ընտանիքը տղամարդու և կնոջ գործակցությամբ է կազմվում: Ազգն էլ մի մեծ ընտանիք է, ով նույնպես կարիքն ունի կնոջ նպաստին, որ իր լրացուցիչ ու հավերժացուցիչ մասն է: Հետևաբար, չկա ճշմարիտ քաղաքակրթություն այն ժողովրդների մեջ, որտեղ արարչագործությունից հետո, տղամարդու համար «օգնական» նշանակված կինը, չի բռնում իր արժանավոր դիրքը, չի բերում իր փափուկ ձեռաց օժանդակությունն առնական կորովի բազկին, և չի դրոշմում իր կրթիչ, ամոքիչ և ազնվացուցիչ ազդեցությունն թե առտնին և թե ընկերային կենցաղի վրա»: Կարելի է եզրակացնել, որ կինը նախևառաջ պարտավորությունն ունի իր ամուսնու կողքին կանգնելու և օժանդակելու նրան, որովհետև Աստծու կողմից «օգնական» է նշանակվել: Սակայն «օգնական» չի նշանակում ստրուկ և որևէ կերպ ստորդասություն չի ենթադրում: Օգնական նշանակում է, կողակից, ընկերակից, խորհրդակից...

42. Մեր պատմության էջերում բազմաթիվ են այնպիսի կանայք ովքեր մեծ ազդեցություն են ունեցել տվյալ ժամանակաշրջանում: Հիշատակվում են 100-ից ավել հայոց թագուհիներ ու իշխանուհիներ:

43. Տիգրանի քույր Տիգրանուհին, Փառանձեմ Սյունեցին հայրենասիրության վառ օրինակներ են: Տիգրան մեծի կին՝ Զարուհին, ներկայանում է որպես հավատարմության լավագույն օրինակ: Գարեգին Ռշտունու կինը՝ Համազասպուհին, քրիստոնյա, ամուր հավատքի տեր կնոջ կերպար է, որն ի գին իր կյանքի՝ չի ուրանում իր հավատքը: Քսաներորդ դարում, հայրենասիրության մի այլ կենդանի և վառ օրինակի ենք հանդիպում հանձինս Սոսե Մայրիկին: Եղիշեն «Վասն Վարդանանց և հայոց պատմության» երկում հատուկ անդրադարձ է ունենում «փափկասուն» հայ կանանց՝ գովերգելով նրանց քաջարի կեցվածքը Վարդանանց պատերազմին:

44. Հայոց պատմության էջերում հիշատակվում է մի թագուհի Խուշուշ անունով, որը Վասպուրականի թագավոր Սենեքերիմ-Հովհաննեսի կինն է եղել: Խուշուշ թագուհին պարզ ու համեստ կյանքով է ապրել, ինչի համար էլ արժանացել է բարեպաշտ կոչումին: Նրա մասին պատմվում է, թե մի անգամ երբ հարցրել են նրան, թե ինչո՞ւ արքայական պերճ հանդերձներ չի կրում, նա պատասխանել է թե գերա-

դասում է արքունական գանձերը ծախսել հայոց երկրում տաճարներ շինելու համար, քանի որ ավելի լավ է հայրենիքը գեղեցկանա, քան մի քանի զարդ ավելանա իր հանդերձի վրա, և թե իր հանդերձները մաշվում են, իսկ տաճար դարձած քարեղեն հանդերձները դարերով պահպանում են իրենց փայլը: Խուշուշ թագուհու կերպարը յուրաքանչյուր հայորդու համար եկեղեցաշինության և հայրենանվիրումի տիպար օրինակ է:

45. Մեր պատմության էջերը թերթելիս հանդիպում ենք մի այլ օրինակելի հայ կնոջ՝ Զաբել թագուհուն: Նա Կիլիկյան Հայաստանի Հեթում արքայի կինն է, որն արժանացել է մարդասեր կոչմանը: Նրա մասին պատմվում է, թե Սիս մայրաքաղաքում կառուցել է մի հիվանդանոց, որտեղ բուժվել են բազմաթիվ հիվանդներ այն բժիշկների կողմից, որոնց հատուկ կերպով հրավիրել է տարբեր կողմերից: Նա չի բավարարվել հիվանդանոց կառուցելով ու բժիշկներ ապահովելով, այլև հենց ինքն է խնամել շատ հիվանդների:

46. Այսօր հայ կանայք զգալի ներկայություն ունեն հասարակության գրեթե բոլոր ոլորտներում, ինչն արդար և բնական երևույթ է: Հայ կինը գործուն մասնակցություն է ունենում հայության կյանքում: Վերջին տարիներին շատ է բարձրաձայնվում, որ կանանց իրավունքները ոտնահարված են: Բայց ունենալով քրիստոնեական հավասարության գիտակցությունը, պետք է շարունակել ապահովել նպաստավոր պայմաններ՝ ամրապնդելու կանանց ազդու մասնակցությունը հայ ժողովրդի հասարակական կյանքում: Իրապես, կինն իր յուրահատուկ տեղն ունի, որովհետև այն ինչ տղամարդը շատ հաճախ չի կարողանում իրագործել, կնոջ միջամտությամբ իրականացված է գտնում:

ՌԱՁԻՆ ԲԱԺԻՆ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

47. Սեռով պայմանավորված հղիության յուրաքանչյուր ընդհատում, անկախ պատճառից, ունենում է իր անխուսափելի բացասական հետևանքները: Գիտակցելու համար խնդրի կարևորությունը և երևույթի կանխման անհրաժեշտությունը՝ անհրաժեշտ է անդրադարձ ունենալ հետևալ դրույթներին.

Ա. Ինչո՞վ է պայմանավորվում երեխայի սեռի խտրական ընտրությունը ընդհանրապես և մասնավորաբար Հայաստանում,

Բ. Որո՞նք են երեխայի սեռի խտրական և անարդար ընտրության հետևանքները,

Գ. Ինչպե՞ս կանխել սեռով պայմանավորված հղիության ընդհատման անարդար երևույթը:

Ա. ԽՆՉՈ՞Վ Է ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԻ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

48. Տարբեր երկրներում տարբեր են նաև սեռով պայմանավորված հղիության ընդհատման դրդապատճառները՝ կախված մշակութային, ազգային, կրոնական, ավանդական առանձնահատկություններից: Օրինակ, Արևմտյան երկրներում գերակա է սպասվող երեխայի առողջությունը՝ անկախ սեռից, այնինչ մի շարք արևելյան երկրներում խիստ կարևորում է սեռը, ինչն էլ խթանում է սեռով պայմանավորված հղիության խտրական ընտրության երևույթի աճը: Այս մոտեցման կարևորագույն դրդապատճառներից մեկը տղա երեխային՝ հասարակության մեջ ավելի նշանակալի ու ազդեցիկ դեր վերագրելու մտայնությունն է: Սա մի կարծրատիպ է, որին դիմագրավելը բավական լուրջ աշխատանք է պահանջում՝ մեղմելու և փոխելու հասարակության մեջ արմատացած կարծիքը: Այստեղ հարկ է նշել նաև, որ տարբեր երկրներում խտրական վերաբերմունքի մոտեցումները տարբեր են, և հասարակական գիտակցության փոփոխությանը միտված գործիքակազմը մշակվում է ըստ տվյալ հասարակության առանձնահատկությունների:

49. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների համաձայն՝ Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության շարունակական աճ գրանցվել է անկախության ձեռքբերումից անմիջապես հետո և հետագա տարիներին շատ բարձր է եղել՝ 100 նորածին աղջկա հաշվով, 102-107 տղայի ծննդյան կենսաբանական նորմի փոխարեն, վերջին տասնամյակում Հայաստանի մարզերում նորածին տղաների թիվը 100 աղջկա հաշվով 111-ից 124 էր: Այս հարաբերակցությունը նորածինների սեռերի անհամամասնության առումով աշխարհում դիտարկված ամենաբարձր ցուցանիշներից է. այն զիջում էր միայն Չինաստանին (118) և Ադրբեջանին (116): Մեր երկրում երեխայի սեռի ընտրության առաջնային գործոնը, թերևս, կանանց նկատմամբ զգալի խտրականությունն է և տղայի համեմատ՝ աղջիկ երեխայի նվազ արժևորումը: Մյուս երկու գործոններն են վերարտադրողական առողջության և ախտորոշման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը և ծնելիության ցածր մակարդակը, ինչն առաջին գործոնի առկայության պարագայում ճնշում է ձևավորում ընտանիքում ապագա երեխայի սեռի վերաբերյալ որոշում կայացնելու առումով:

50. Անդրադառնալով առաջին գործոնին՝ փորձենք հասկանալ, թե ինչո՞ւ է տղա զավակ ունենալու ցանկությունը հանդիսանում առաջին և հիմնական պատճառը, որպեսզի ծնողները հրաժարվեն ապագա աղջիկ զավակներից, մանավանդ որ արդեն իսկ ունեն մեկ կամ մեկից ավելի աղջիկներ:

51. Նախ հարկ է նշել, որ հայերիս մեջ արմատացած է այն մտայնությունը, որ տղա երեխան «տան ծուխը» շարունակողն է: Տոհմի և ազգանվան շարունակականության այսօրինակ «մարմաջը» երբեմն այնքան է ուժգին է արտահայտվում, որ հաղթում է ամուսնական և ծնողական զգացումներին՝ ստիպելով դիմել հղիության արհեստական ընդհատման:

52. Մեր հասարակության մեջ գտնվում են նաև այնպիսինները, որոնք տղա զավակ ունենալը պատիվ են համարում, իսկ աղջիկ ունենալը՝ անարգանք: Բնականաբար այսպիսի մոտեցում դրսևորող անձինք նախևառաջ հոգեբանական և հոգևոր խնդիրներ ունեն, և այս առումով մեծ է եկեղեցու դերը՝ նրանց տեսակետի պատճառը հասկանալու, քննելու հոգևոր գիտակցության բացերը և ձևավորելու երեխայի կյանքի՝ որպես անվերապահ արժեքի գիտակցությունը:

53. Հաճախ տղայի առավել կարևորումը աղջիկ երեխայից պայմանավորվում է այն համոզմունքով, որ հասարակական և նյութական առումով ավելի շահեկան դիրքի հասնելու հավանականությունը մեծ է տղայի դեպքում, ինչը ծնողների ծերությունն ապահովելու գրավական է դիտվում այն պարագայում, երբ աղջիկն ամուսնանում է և ապահովում «այլ ընտանիքի» բարեկեցությունը: Իրականում այս վերջին կարծիքը, որ նախկինում սերտորեն աղերսվում էր իրականության հետ, կանանց՝ հասարակության մեջ ակտիվորեն ներգրավված լինելու միտմանը զուգընթաց, ներկայումս ավելի ու ավելի է կորցնում արդիականությունը՝ շատ հաճախ փաստելով ճիշտ հակառակը: Այս մասին են վկայում նաև ՄԱԲՀ-ի ուսումնասիրության արդյունքներն այն մասին, որ Հայաստանի ծերանոցներում բնակվող անձանց գերակշիռ մասն ունեն տղա զավակներ:

Բնական չափսերը՝ 15.2x18.2սմ: Վենետիկ: տպ. Նահապետ Գյուլնազարի: Տպագրվել է 1687թ.:

Բ. ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԻ ԱՆԱՐԴԱՐ ՈՒ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

54. Անժխտելի է այն իրողությունը, որ բնության որևէ օրենքի դեմ ոտնձգությունն անհետևանք չի մնում և խախտում է աստվածադիր ներդաշնակությունը՝ բերելով ավերների:

55. Տիեզերքում գործում են հստակ օրենքներ, որոնցով կարգավորվում են բնության երևույթները՝ արևաճագն ու մայրամուտը, տարվա չորս եղանակների հերթագայությունը, նյութական աշխարհի գոյատևումն ու ինքն իր մեջ զարգանալու ու շարունակվելու ընթացքը…

56. Բնության աստվածադիր այս օրենքներից որևէ մեկի բացակայության կամ խախտման պարագայում խաթարվում է ողջ տիեզերքի կենսագործման բնականոն ընթացքը: Մարդու կյանքը ևս, լինելով կարևորագույն մասնիկն այս տիեզերքի, ենթարկվում է որոշակի գոյութենական օրենքների, որոնց շրջանցումը հանգեցնում է ավերիչ հետևանքների:

57. Աստված, ինչպես արդեն նշել ենք, արարելով մարդուն, պատվիրեց «աճել, բազմանալ ու երկիրը լցնել», ինչն իրականություն է դառնում սերնդագործության միջոցով: Այս կարևորագույն առաքելության իրագործման գիտակցությունը, սակայն, միշտ չէ, որ արթուն է մարդկանց մեջ, ինչն էլ պատճառ է դառնում նոր սկզբնավորվող կյանքի նշանակության թերարժևորման:

58. Այս համատեքստում տեղ է գտնում նաև սեռով պայմանավորված հղիության ընդհատման երևույթը, որ հաճախ իրագործվում է կարծրատիպային մտածողության հիմքով՝ կամավոր կամ պարտադրաբար՝ կախված այն բանից, թե ով է այդ մտածողության կրողը: Ցանկացած դեպքում երևույթը հանգեցնում է աղետալի հետևանքների, որոնց ազդեցությունը նշանակալի է ինչպես տվյալ զույգի հետագա կյանքի, այնպես էլ հասարակական մակարդակներում:

59. ՄԱԲՀ գնահատականի համաձայն սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման փաստված իրողության շարունակականությունը կհանգեցներ Հայաստանի բնակչության սեռատարիքային կազմի պատկերի էական խաթարմանը. 2020թ-ին բնակչության սեռատարիքային կազմում մեծամասնություն կկազմեին երիտասարդ տղա-

մարդիկ, իսկ 2040թ-ին անհամամասնությունը կհասներ 30,000-ի: Սա ուղղակի վտանգ է ապագա ընտանիքների կազմության համար, որ հասարակության բջիջ լինելով և պայմանավորելով այդ նույն հասարակության կենսունակությունը, սպառնում է նաև հայ տեսակի գոյութենական շարունակությունը:

60. ՄԱԲՀ և ՄԶՄԿ ուսումնասիրությունները վկայում են նաև, որ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները հանգեցնում են ժողովրդագրական հավասարակշռության խախտման, արտագաղթի մեծացման, թրաֆիքինգի և սեռական բռնությունների աճի, ուստիև՝ հանցագործությունների թվի ընդհանուր աճի՝ ևս մեկ անգամ փաստելով, որ երբ մարդու կամայական միջամտությամբ և մեղքի արդյունքում խախտվում է աստվածադիր ներդաշնակությունը, հետևանքները սպասել չեն տալիս:

Գ. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՆԽԵԼ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՐԴԱՐ ԵՐԵՎՈՒՅԹԸ

61. Սեռով պայմանավորված խտրական և անարդար ընտրության երևույթը կարելի է կանխել, երբ ունենանք գիտակից հասարակություն: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է համատեղել հասարակության բոլոր օղակների աշխատանքը՝ սկսած ընտանիքից, դպրոցից, պետական ու հասարակական կառույցներից մինչև եկեղեցի:

62. Ի թիվս հանրային իրազեկման և հասարական գիտակցության ձևավորմանը միտված ծրագրերի ու միջոցառումների՝ առանցքային նշանակություն պետք է ունենա երեխաների մեջ այն գիտակցության հասունացումը, որ ցանկացած երեխա՝ տղա, թե աղջիկ, համահավասար արժեք են ներկայացնում և առանց միմյանց չեն կարող ապահովել շարունակական գոյություն: Ավելին, կյանքի տարբեր հանգրվաններում տարբեր մարտահրավերների դիմագրավելիս անհրաժեշտ է լինում երկու սեռերի փոխօգնությունը՝ արդյունավորապես նպաստելով նրանց համատեղ կյանքին ու գործունեությանը:

63. Ներածականում անդրադարձ կատարվեց տղամարդկանց կողքին կանանց կարևոր ու անհրաժեշտ ներկայությանը: Բնականաբար, դա

չի շեշտում որևէ առավելություն մյուսի նկատմամբ, այլ ընդգծում է, որ երկու սեռերն էլ հավասար արժեք ունեն հասարակության համար: Այս գիտակցումը պետք է սերմանվի և արմատավորվի դեռ վաղ տարիքից: Երբ երեխաները դաստիարակվում են այդ գիտակցությամբ և հասկանում են, որ կենսաբանորեն իրարից տարբեր լինելով հանդերձ, միաժամանակ հավասար են հասարական դիրքի ու իրավունքի ոլորտներում, բացառվում է նաև հասարակական կարծրատիպային մտածողության արդյունքում դրսևորվող սեռով պայմանավորված ցանկացած խտրական ընտրություն:

64. Մարդկային կյանքը հասարակական գիտակցության մեջ արժևորելու և իմաստավորելու գործում հատկապես կարևորվում է համայնքներում իրենց հոգևոր սպասավորությունը ծիսական արարողությունների, համայնքային հանդիպումների, տնայցերի և անհատական խորհրդատվությունների միջոցով իրականացնող հոգևորականների ներգրավվածության նշանակությունը:

ՐԿՐՈՂԴ ԲԱԺԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՐԸ ՀՂԻՈՒԹՅԱՆ՝ ՍԵՌՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՏՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

65. Ինչպես նշեցինք, սեռով պայմանավորված հղիության ընդհատման դեմ պայքարելու գործընթացում մեծ դեր ունի հոգևորականը: «Նայեցե՛ք ձեր կարգին ու աստիճանին և արիացե՛ք, պատրաստ և արթո՛ւն եղեք մարդկանց մեջ, որովհետև դուք համեմող աղ է՛ք (տե՛ս՝ Մատթ 5.13), որ համեմում եք մարդկանց անհամությունը (Մատթ. 5.14), որ մարդկանցից հալածում եք խավարը» (Վարդան Այգեկցի): Արդարև, քահանան լինելով համայնքի հոգևոր հայրն ու խնամատարը, իր հանապազօրյա ծառայությամբ կոչված է հայրական հոգածություն ցուցաբերելու իրեն վստահված հոտի նկատմամբ՝ իմաստությամբ առաջնորդելով նրանց և հեռու պահելով խոտոր ճանապարհներից:

66. Հոգևորականը՝ քահանան, իր հոտի հովիվն է, ով պատասխանատվություն է կրում հոտի յուրաքանչյուր անդամի համար: Պետրոս առաքյալն իր ընդհանրական առաջին թղթում ասում է. «ուրեմն՝

Բնական չափսերը՝ 7.1X11.4սմ: Կ. Պոլիս: տպ. Գրիգոր Մարզվանեցու: եւ տեսի բ[]ժ[]ան ա[ստուա]ծաբանքն հայեին ի վ[ե]ր[ա] մանկացե[ա]լ բանին, և կիւրեղ յոյժ մերձ: Տպագրվել է 1713թ.:

աղաչում եմ երեցներին… արածեցրե՛ք Աստծո այդ հոտը, որ ձեզ է հանձնված՝ վերակացու լինելով ոչ թե ասես ակամա, այլ կամովին, ըստ Աստծո» (5.1-2): Արդի ժամանակներում համայնքային կյանքում տեղ գտած և հոգևոր հովվի հոգածության շրջանակներում հայտնված երևույթներից է սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխումը:

67. Շեշտելով քահանայի կարևոր դերակատարությունը այս հարցում՝ փորձենք անդրադառնալ խնդրի արծարծման հնարավորություններին՝ հոգևոր ծառայության տարբեր դրսևորումներում.

Ա. Հոգևորականը՝ որպես քարոզիչ,

Բ. Ծիսակատար հոգևորականը՝ խրատող հայր,

Գ. Հոգևորական և երիտասարդներ:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՐՈԶԻՉ

68. Հոգևորականը նախևառաջ Աստծո խոսքի քարոզիչն է եկեղեցում, իսկ եկեղեցուց դուրս՝ քարոզիչ է ամենուր՝ համայնքի անդամների տներում, ուրախության ու տխրության սրահներում, կրթօջախներում, մշակութային տարբեր միջոցառումներին… Այլ խոսքով, հոգևորականը մարդկանց հետ հաղորդակցվելու իրեն ընծայված յուրաքանչյուր առիթ ծառայեցնում է խոսելու, ուսուցանելու և դաստիարակելու առաքելությանը:

69. Հոգևորականը քարոզների միջոցով ժողովրդին ոչ միայն հասցնում է Աստծո խոսքը, այլև հորդորում և ուղղորդում հավատացյալներին լինել Աստծուն արժանի, հավատարիմ զավակներ: Առ այս հոգևորականը իր քարոզներում չի կարող չանդրադառնալ համամարդկային արժեքներին ու սկզբունքներին, ընտանիք կազմելու սրբազան առաքելությանը, ընկերասեր ու մարդասեր, ողորմած ու ներող լինելուն, որոնց շնորհիվ մարդու կյանքը իմաստավորվում և արգասավորվում է:

70. Արժեքների մեջ նշեցինք ընտանիք կազմելու սրբազան առաքելությունը: Հոգևորականը իր քարոզներում բազմիցս առիթ է ունենում անդրադառնալու այս թեմային, որովհետև ընտանեկան հարաբե-

րությունների նկատմամբ առողջ մոտեցումն է համայնքի կենսունակության ապահովման գրավականը: Տեղին է մեջբերել երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի հետևյալ միտքը. «Ընտանիքը մարդկային կյանքի կենտրոնն է, Աստծո ստեղծագործության ամբողջացումը… Ընտանիքի նպատակը լոկ ֆիզիկական կյանք փոխանցելը չէ, այսինքն՝ երեխաներ ծնելը, այն, ավելի շուտ այնպիսի միջավայրի ստեղծելն է, որում նրա անդամները կկարողանան լիովին ծաղկել և հասնել իրենց երջանկությանը»: Այս առնչությամբ քարոզիչ հոգևորականը կարող է իր խոսքում շեշտել ընտանիքի կարևորությունն իր ամբողջության մեջ և յուրաքանչյուր անդամի նշանակությունն առանձնաբար՝ անդրադառնալով մարդկային յուրաքանչյուր կյանքի արժևորմանը՝ անկախ սեռից և տարիքից:

71. Ապահովելով թեմայի տրամաբանական շարունակությունը և անդրադառնալով սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման թեմային՝ կարելի է նշել, որ այս երևույթը նախևառաջ ոտնձգություն է Աստծո նախախնամության և աստվածապարգև կյանքի դեմ: Ձեռնարկում տեղ գտած վիճակագրական տվյալները կարող են իրատեսական և համոզիչ դարձնել քարոզի նյութը՝ փաստելով, որ խնդիրն առկա է մեր մեջ, մեր հասարակության կյանքում: Կարևոր է, որ շեշտվի քարոզի նյութի առնչությունը տվյալ համայնքի կյանքին, ինչը կարող է լինել այն պարագայում, երբ քարոզիչը գիտակ է իր համայնքի անդամների հոգեվիճակին, ծանոթ է համայնքի անդամների մտածողությանը, տեղյակ է դժվարություններին ու մտահոգություններին: Երբ քահանան մնայուն կերպով ներկայություն է իր համայնքի անդամների կյանքում, որպես այդ ներկայության բնական արդյունք՝ նա, հիմք ունենալով Աստվածաշունչ Մատյանը, իր տված խորհուրդներով ու թելադրություններով հնարավորինս օգտակար կլինի հոտի անդամներին:

72. Քարոզիչ հոգևորականն այդ առաքելության ընթացքում կարող է բախվել տարաբնույթ դժվարությունների, որոնց հաղթահարման համար պետք է միջոցներ ու լուծումներ որոնի՝ կարողանալու հնարավորինս դրական արդյունքի հասնել և օգտակար լինել համայնքի անդամներին: Այդ դժվարություններից են իշխող կարծրատիպերը, որոնցով ապրում են համայնքները՝ հաճախ հասարակական ճնշման արդյունքում արժեքային նշանակություն ունեցող երևույթները ստորադասելով կարծրատիպային մտածողության դրսևորումներին:

73. Կարծրատիպային մտածողության դեմ պայքարելու ճանապարհին քարոզի ընթացքում հոգևորականին լավագույնս կարող է օգնել Հիսուսի օրինակը, որ այդօրինակ մտածողությունը մերժելու լավագույն օրինակներն է տվել՝ մաքսավորների, սամարացիների հետ շփում, շաբաթ օրը չաշխատելու հարց և այլն: Երբ քարոզիչ հոգևորականի հետ կապը հիմնվում է փոխադարձ հարգանքի ու սիրո վրա, կարծրատիպերի հաղթահարումը ավելի հեշտ է տրվում, քանզի խոսքը նրանց համար դառնում է վստահելի և հեղինակավոր:

74. Կարևոր է քարոզի միջոցով խրախուսել նաև ծեսից հետո հնարավոր անհատական զրույցը, քանի որ սեռի խտրական ընտրությամբ տվյալ պահին մտահոգ անձիք կարիք կունենան մասնավոր զրույցի՝ անհատապես իրենց կարիքները բացահայտելու և հոգևոր հստակ ուղղորդում ստանալու համար:

ԾԻՍԱԿԱՏԱՐ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԸ՝ ԽՐԱՏՈՂ ՀԱՅՐ

75. Հոգևորականը իր ձեռնադրությամբ ու օծումով, լինելով Աստծո դեսպանը աշխարհի վրա, այսինքն՝ լինելով Աստծո խոսքի փոխանցողը ժողովրդին, միաժամանակ նաև ծիսակատար հոգևորական է, որը նաև ծեսերի միջոցով իրեն հանձնված համայնքի անդամներին առաջնորդում է դեպի Աստված՝ երկյուղածությամբ պաշտելու ու փառավորելու Նրա Սուրբ անունը: Առ այս հոգևորականը գրեթե յուրաքանչյուր ծիսակատարության ընթացքում առիթն ունի իր խոսքը փոխանցելու իր հոտի անդամներին, քանի որ եկեղեցական յուրաքանչուր արարողություն հոգևոր ծառայություն է և հնարավորություն է ընձեռում ժողովրդին փոխանցել Տիրոջ պատգամները: Ծիսակատարությունները հոգևորականի համար այն նվիրական առիթներն են, որոնց ընթացքում նա առաքինություն է սերմանում իր համայնքի անդամների սրտերում ու հոգիներում՝ աճեցնելու համար հոգեպես առողջ, արի, հոգևոր և ազգային բարձր արժեքներին հավատարիմ անդամներ:

76. Սեռի խտրական ընտրությամբ պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման խնդրին հնարավոր է անդրադառնալ հիմնականում հետևյալ ծիսակատարությունների ընթացքում.

ա. Սուրբ Պատարագ,



Բնական չափսերը՝ 7.6x10.6սմ։ Էջմիածին։ տպ. Ս. Գրիգոր Լուսավորչի։ Ով լցուցիչ փափագանաց ս[ուր]բ ծերունւոյն, լից և զիղձս իմ զոր միշտունիմ քոյ ս[ուր]բ տեսոյն։ Տպագրվել է 1774թ.։

կերպով Սուրբ Խորանից մատուցելու հնարավորությունը, որպեսզի ասվածը՝ ազդու և խրատը՝ դաստիարակիչ լինի լսողների համար:

Բ. ՍՈՒՐԲ ՊՍԱԿ

79. Սուրբ Պսակի խորհուրդը Հայ Եկեղեցու այն նվիրական խորհուրդն է, որի միջոցով երկու տարբեր անհատներ դառնում են մեկ մարմին՝ կազմելով ու հիմք դնելով նոր ընտանիքի: Իսկ ընտանիքը Աստծուց մարդուն շնորհված մեծագույն պարգևն է, որի շնորհիվ մարդը գործակից է դառնում Աստծո ստեղծագործական ծրագրին:

80. Իրապես, ընտանիքը կազմվում է Ս. Պսակի խորհրդի ժամանակ: Ընտանիքի հիմքը օրհնողը Աստված ինքն է, որ աներևույթ կերպով փոխանցում է այդ օրհնությունը: Այդ աներևույթ օրհնության առերևույթ փոխանցողը ինքը հոգևորականն է, ով աշխարհում լինելով Աստծու դեսպանը՝ կատարում է այդ օրհնության փոխանցումը Ս. Պսակի խորհրդի ժամանակ:

81. Սակայն մինչ բուն արարողության կատարումը կարելի է որոշ առիթներ օգտագործել ամուսնանալ պատրաստվող զույգին արարողությանը պատրաստելու համար՝ նրանց հետ զրուցելով ընտանեկան առողջ հարաբերությունների, ընտանեկան կյանքում հանդիպող դժվարությունների, ընտանիքի առջև ծառացած արդի մարտահրավերների՝ մասնավորաբար, սեռով պայմանավորված հղիությունների ընդհատումների և ամուսնությանն առնչվող այլ խնդիրների մասին: Այդպիսի առիթ կարող են ծառայել՝

ա. Զրույցը Ս. Պսակի ժամադրությունը նշանակելիս,

բ. Հանդիպումը Ս. Հաղորդություն ստանալու համար զույգին Ս. Պսակից մեկ շաբաթ առաջ կիրակնօրյա Ս. Պատարագին հրավիրելու արդյունքում,

գ. Պատգամը Ս. Պսակի ավարտին:

82. Կարևոր է աշխատանքը Ս. Պսակի պատրաստվող զույգերի հետ, որոնք նախքան խորհրդի կատարումը հոգևորականի հետ զրույցի ընթացքում կարող են ներկայացնել ապագա ընտանիքից իրենց ունեցած սպասումները, ընտանեկան փոխհարաբերությունների վե-

րաբերյալ իրենց պատկերացումները և այլն: Նախամուսնական այս շրջանում է, որ ուրվագծվում է, թե ամուսնության պատրաստվող զույգերը ինչպիսի՞ ընտանիք կունենան ապագայում: Հոգևորականի դերը այս խնդրում շատ կարևոր է, որովհետև եթե ամուսնության պատրաստվող զույգը վստահում է նրան և ընդունում խրատներն ու հորդորները, ամուսնական կյանքի պատրաստության իր ընթացքն սկսելու է հոգևորականի ուղղորդմամբ:

83. Այս շրջանն այն լավագույն ժամանակահատվածն է, երբ հոգևորականը հնարավորություն ունի արմատապես լուծում տալ սեռով պայմանավորված խտրական ընտրության խնդրին: Լինելով երիտասարդների խորհրդատուն՝ հոգևորականը կարող է առիթ ստեղծել և ամուսնության պատրաստվող երիտասարդների հետ խոսել այս երևույթի մասին՝ շեշտելով, որ կինը նույնքան կարևոր դերակատարություն ունի ընտանիքի կայացման մեջ, ինչքան տղամարդը:

84. Ս. Պսակի խորհրդի ժամանակ հոգևորականը ավետարանական հատվածներ ու աղոթքներ է ընթերցում, որտեղ մանրամասնորեն խոսվում է ընտանեկան հարկի սրբության, ընտանիքը հաստատուն պահելու մասին: Հոգևորականը արարողության ընթացքում իր խոսքում կարող է անդրադառնալ ընտանիքի սրբությանը, ընտանիքն առողջ հիմքերի վրա պահելուն և, հատկապես, որդեծնության պատգամին: Վերջինիս առնչությամբ հոգևորականը կարող է հատուկ կերպով շեշտել, որ զավակ ասելով հասկանում ենք ինչպես տղա, այնպես էլ աղջիկ երեխա, և այս առումով որևէ խտրություն ընդունելի չէ հոգևոր տեսակետից: Հոգևորականը կարող է շեշտել, որ հետագայում ունենալիք նրանց զավակները Աստծու կողմից շնորհված պարգևներ են, որոնց հանդեպ պետք է վարվել ամենայն պատասխանատվությամբ ու հոգատարությամբ: Երեխայի սեռի խտրական ընտրությունն Աստծո կողմից իրենց տրված պարգևի մերժումն է, որի պատասխանատվության ողջ ծանրությունն ընկնում է զույգի վրա:

Գ. ՍՈՒՐԲ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

85. Սուրբ Մկրտության խորհուրդը Հայ Առաքելական Եկեղեցու ամենանվիրական խորհուրդներից է, որի ընթացքում մկրտվողը դառնում է քրիստոնյա՝ իր վրա կրելով Քրիստոսի անունը: Մկրտությամբ

Բնական չափսերը՝ 8.6x14.5սմ: Վենետիկ: տպ. Դեմետրիոս Թեոդոսիուի: Տպագրվել է 1772թ. 25 Ապրիլ:

բ. Սուրբ Պսակի խորհուրդ,

գ. Սուրբ Մկրտության խորհուրդ,

դ. Տնօրինեք

Ա. ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

77. Ս. Պատարագը քրիստոնեական աստվածպաշտական ծիսակատարությունների գերագույն և ամենանվիրական խորհուրդն է: Այս սրբազան խորհրդի ժամանակ է, որ հաղորդվում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ: Ս. Պատարագի ընթացքում հոգևորականին առիթ է ընձեռվում խոսել եկեղեցում ներկա հավատացյալների հետ՝ քարոզի միջոցով: Արդարև, հոգևորականների քարոզների նյութը, հիմնված լինելով Աստվածաշնչային մեջբերումների վրա, հաճախ առնչվում է ընտանիքին վերաբերող նյութերի, որ հոգևորականը կարող է հեշտությամբ ծառայեցնել՝ խոսելու ընտանիքի քրիստոնեական ընկալման և ընտանիքի առջև արդի ժամանակներում ծառացած խնդիրների՝ ի մասնավորի՝ սեռով պայմանվորված հղիության ընդհատումների մասին:

78. Համայնքային կյանքում տեղ գտնող և արդիական նկատվող խնդիրների արծարծումը հոգևորականի կողմից խիստ կարևոր է, որովհետև «ոչ ոք չի կասկածում, որ քահանան պիտի ոչ միայն տեղյակ լինի Հին և Նոր Կտակարաններին, այլև հմուտ՝ իմաստասիրական գիտություններում. քանզի նրա խնդիրն է խրատել, ուսուցանել, բարու մեջ համոզել ու չարից հեռու պահել աշխարհիկ մարդկանց, որոնցից շատերն առատամիտ են և ուշիմ, ձեռնարկումների մեջ հանճարեղ և խոսքի կառուցման մեջ զորավոր: Եթե քահանան տկարանա այդպիսիներին զորավոր փաստերով հաղթել, նրա խրատական խոսքերն այլևս չեն ազդի նրանց համառ մտքի վրա, և գուցե հպարտանալով իսպառ արհամարեն հոգևոր խրատները, և քահանաների տգիտությունը նրանց կործանման առիթ դառնա: Ուստի քահանան ամեն ինչով պիտի գերազանցի ամենքին, ինչպես վարքի սրբությամբ, այդպես էլ գիտելիքներով» («Խրատի Թանգարան», Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի): Հիրավի, հոգևորականին ծեսի միջոցով վերապահվում է օրինակով, գիտելիքներով ու փաստերով իր խոսքը կենդանի

քրիստոնյա դառնալը քրիստոնեական արժեքներով ու սկզբունքներով ապրելու պարտավորություն է: Այդ արժեքներն ու սկզբունքները մեզ են տրված Աստվածաշնչի միջոցով և կենդանի են եկեղեցում փոխանցվող Սրբազան Ավանդությամբ:

86. Սուրբ Մկրտության խորհրդի ժամանակ ևս, հոգևորականը կարող է առիթն օգտագործել և բոլոր ներկաներին բացատրելով Մկրտության խորհրդի իմաստը՝ ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ս. Մկրտության խորհուրդը վերաբերվում է բոլորին անխտիր, այսինքն՝ մկրտվում են թե՛ տղաները, թե՛ աղջիկները, որովհետև Քրիստոս բոլորի համար խաչվեց՝ իր անձը որպես փրկագին տալով բոլոր մարդկանց համար՝ առանց խտրության: Եվ քանի որ Քրիստոսի առաջ բոլորն էլ հավասար են, մենք, լինելով Քրիստոսի հետևորդները և կատարելատիպ ունենալով Նրան, պետք է հավատարիմ մնանք Տիրոջը, կրողը լինենք Նրա սկզբունքների ու գաղափարների՝ բացառելով խտրական վերաբերմունքի այդօրինակ դրսևորումը:

87. Այս ընկալման արտահայտությունը գտնում ենք նաև «Որոմների առակում», որ ներկայացված է Նոր Կտարկարանում. «Երկնքի արքայութիւնը նմանուեց մի մարդու, որ իր արտի մէջ բարի սերմ սերմանեց: Եւ երբ մարդիկ քնի մէջ էին, նրա թշնամին եկաւեւ ցանած ցորենի վրայ որոմ ցանեց ու գնաց: Եւ երբ ցորենը բուսաւ ու պտուղ տուեց, ապա երեւացեւ այն որոմը: Տանտիրոջ ծառաները մօտեցան ու ասացին նրան. «Տէր, չէ՞ որ քո արտի մէջ դու բարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է այդ որոմը»: Եւ տէրն ասաց նրանց. «Թշնամի մարդ է արել այդ»: Ծառաները նրան ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք այն»: Եւ տէրը նրանց ասաց. «Ո՛չ, մի գուցէ որոմը քաղելիս, ցորենն էլ նրա հետ արմատախիլ անէք: Թողէ՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչեւ հունձը, եւ հնձի ժամանակ ես հնձողներին կ՚ասեմ՝ նախ այդ որոմը քաղեցէ՛ք եւ դրանից խուրձեր կապեցէ՛ք այրելու համար, իսկ ցորենը հաւաքեցէ՛ք իմ շտեմարաններիս մէջ» (Մտթ. 13.24-30): Մեկնիչների մեծամասնությունը այդ բարի մարդու մեջ տեսնում են Քրիստոսին, ով առանց խտրության բարի սերմեր է սերմանում ամենուր: Այդ սերմերի մեջ է նաև մարդ արարածը, որը արարչագործության գլուխ գործոցն է: Երբ մարդ ենք ասում, հասկանում ենք թե՛ տղամարդ, և թե՛ կին, որով հստակ տեսնում ենք, թե Արարչի համար տարբերություն ու խտրություն չկա, և Եկեղեցին լինելով Քրիստոսի խորհրդական Մարմինը աշխարհում և շարունակողը Նրա գործի, մկրտում է բոլոր նրանց ովքեր դիմում են նրան, առանց խտրություն դնելու: Անշուշտ երբ ասում ենք մկրտում է

բոլորին, ի նկատի ունենք հավատացյալներին, որոնք հավատում են Աստծուն, սա մեծահասակների պարագային, իսկ մանուկների պարագային Եկեղեցին ընդունում է կնքահոր պատրաստակամությունը, մկրտվող երեխայի ծնողների հետ միասին մկրտված երեխային դաստիարակելու քրիստոնեական սկզբունքների վրա:

88. Ավելին, Արարիչը լինելով գերագույն բարին, իր արարածների «սիրտը վարում ու հերկում է՝ ճշմարտությունն առաջադրելով»: Երբ արարածները ընթանում են ճշմարտության շավիղներից, բնականաբար հեռու են մնում սխալ արարքներից ու որոշումներից, որոնք ծնունդ են առնում ճշմարտության հակառակորդից: Արդարև, յուրաքանչյուր սերմ՝ մարդ, իր դերն ու պարտավորությունը ունի, որով երբ փորձենք խտրականորեն ձերբազատվել որևէ մարդուց, բնականաբար այդ արարքով խանգարած կլինենք ընդհանուր արարչագործության գործին և կհակառակվենք Աստծու կամքին:

Դ. ՏՆՕՐՀՆԵՔ

89. Տնօրինեքը հոգևորական-համայնք կապի ամենալավ առիթներից մեկն է, որովհետև հովվի այցելություն է իր հոտի անդամներին: Տնօրինեք նշանակում է օրհնել տունը, այսինքն՝ քահանան, այցելելով իր համայնքի անդամներին, օրհնում է նրանց տները, ինչպես նաև օրհնում է այդ տներում բնակվող անդամներին:

90. Տնօրինեքը հոգևորականի և համայնքի անդամի մտերմիկ զրույցի լավագույն առիթն է: Այս հանդիպումներն առավելապես կարող են դաստիարակչական ու խրատական բնույթ կրել: Համայնքի անդամները հոգևորականի այս այցելությունները հաճախ դիտում են որպես իրենց հուզող հարցերին պատասխաններ ստանալու, իրենց դժվարությունների ու խնդիրների լուծումները գտնելու հնարավորություն: Այս այցելությունները հոգևորականի համար հոգևոր խրատի լավագույն առիթ են՝ փոխանցելու առողջ, ամուր, աստվածավախ ու աստվածահաճո ընտանիք ունենալու պատգամները:

91. Այցելությունների արդյունքում հոգևորականը ծանոթանում է յուրաքանչյուր ընտանիքի դժվարություններին ու խնդիրներին, ինչը հնարավորություն է ընձեռում «ախտորոշում» անել և յուրաքանչյուրի

Բնական չափսերը՝ 5.2x6.9սմ։ Ամստերդամ։ տպ. Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի։ Տպագրվել է 1664թ.։

համար առանձնաբար մշակել հոգևոր առողջացման ճանապարհը: Ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր հիվանդության պարագայում վաղ «ախտորոշում»-ը կանխում է հիվանդության քայքայիչ զարգացումը: Շփման ընթացքում հոգևորականը կարող է նկատել կարծրատիպային մտածողություն արտահայտություններ ընտանիքում և աշխատանք տանել գիտակցության վերափոխման և բարեփոխման ուղղությամբ, քանի դեռ սեռի խտրական ընտրության խնդիրը ծառս չի եկել ընտանիքի առաջ:

92. Կարծրատիպային մտածողությամբ առաջնորդվող ընտանիքների հետ աշխատանքում հոգևորականը շատ զգույշ և ճկուն պետք է լինի, որպեսզի կարողանա այդ ընտանիքում բուն դրած կարծրատիպի փոխարեն առողջ մտածելակերպ զարգացնել՝ համբերությամբ և իմաստության դիմակայելով հակափաստարկներին, արդարացումներին ու պատճառաբանություններին:

93. Պետք է աստիճանաբար ձևավորել այն գիտակցությունը, որ ընտանիքը կազմվում է տարբեր տարիքի ու սեռերի անհատներից, որոնք, սակայն, կազմում են մի ամբողջություն: Նրանցից մեկի բացակայության պարագայում խախտվում է ընդհանուր ամբողջությունը: Ընտանիքում յուրաքանչյուր ոք ունի իր պարտավորությունը և դերային տարբերությունը, որը, սակայն, երբեք չի ենթադրում որևէ մեկի ստորադասումը մյուսին:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

94. Հոգևորականի ծառայության կարևորագույն գործառույթ է նաև երիտասարդների հետ տարվող աշխատանքը: Երիտասարդները, լինելով պետության և ժողովրդի ապագան կերտողները, այս պարագայում համայնքների ողնասյունն ու ավիշն են, որոնց հետ հոգևորականի գործակցությունը համայնքը դարձնում է ուժեղ ու կենսունակ:

95. Երիտասարդների հետ գործակցությունը կարող է տարաբնույթ լինել՝ անհատական զրույցներ, Ս. Գրքի սերտողության ժամեր, քննարկումներ, ուխտագնացություններ, կրթադաստիարակչական և մշակութային ծրագրեր, ներգրավում եկեղեցու սոցիալական աշխատանքներում:

96. Հոգևորականը, լինելով համայնքի հոգևոր հովիվը, որ խրատում և դաստիարակում է իր հոտի անդամներին հավաքական իմաստով, առավելագույնս հաջողում է անհատական աշխատանքի, զրույցների և խորհրդատվության պարագայում: Անհատական զրույցները հատկապես կարևորվում են երիտասարդների պարագայում, քանի որ մեծապես նպաստում են զորավոր և մտերմիկ կապի հաստատմանը, որ կարող է հիմնված լինել փոխադարձ անկեղծության ու վստահության վրա: Այսպիսի մթնոլորտի ապահովումն է երաշխավորում երիտասարդներին հուզող հարցերի անվերապահ արծարծումը:

97. Հոգևորականն անհատական այս զրույցները կարող է օգտագործել երիտասարդների հետ քրիստոնեական արժեքների, ազգային ավանդությունների, բարոյական սկզբունքների մասին խոսելու համար: Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին ասում է. «Երիտասարդները թող այնքան կրթվեն իմաստունների ու առաքինիների մոտ, որ երբ բաժանվեն ու հեռանան նրանցից, կարողանան անկորուստ հիշել նրանց խոսքերը՝ իբրև բարեխրատ ուսուցիչ: Ով իմաստություն ու սիրալիր քաղաքավարություն ունի, ուր էլ գնա, ինչպիսի ձախորդություններ մեջ էլ ընկնի, փառք ու բարի համբավ կգտնի: Իմաստուն երիտասարդը նման է խորարմատ ծառի, որին փորձությունների քամիները թեպետև շարժում են, բայց կործանել չեն կարող»:

98. Անհատական զրույցները նպաստում են երիտասարդների ներաշխարհի մաքրմանը և ուղիղ ճանապարհով ընթանալու, ինչպես ասվում է Առակաց գրքում. «Ուղիղ են այն երիտասարդի ճանապարհները, ով մաքրությամբ է ընթանում» (Առ 20.11), իսկ մաքրություն այստեղ նշանակում է ազնիվ ու առաքինի կյանքով, աստվածահաճո լինել, մաքուր միտք ու հոգի ունենալ մաքրություն շրջապատում ևս տարածելու համար, որովհետև «մի կենդանի օրինակը, ավելի արժի քան հազար խոսված խրատը»:

99. Երիտասարդների հետ անհատական զրույց ունենալը լավ առիթ է խոսելու կանանց և տղամարդկանց հավասարության մասին՝ բարեբեր հող նախապատրաստելով առողջ ընտանիքների ձևավորման համար, որտեղ չի կարող ունենալ սեռի խտրական ընտրության երևույթը:

ԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

100. Հոգևոր ու բարոյական բարձր արժեքներ կրող հասարակություն ունենալու համար, պետք է մարդիկ հավասար լինեն՝ անկախ սեռից, և յուրաքանչյուր ոք իր դերն ունենա նախ՝ ընտանիքում և ապա՝ հասարակության մեջ: Որևէ սեռի գերակշռությունն ու գերակայությունը մյուսի նկատմամբ անպայմանորեն ունենում է իր բացասական հետևանքը՝ խաթարելով բնության ներդաշնակությունը ու խախտելով աստվածադիր օրենքները: Աղջիկ զավակները նույնքան կարևոր են, որքան տղաները և ոչ մի պատճառ ու կարծրատիպ չեն կարող արդարացնել բացառապես սեռային հատկանիշով պայմանավորված աղջիկ երեխաների ներարգանդային սպանությունը: Ապրելու իրավունքը խտրություն չի ճանաչում և Աստծո կողմից շնորհվում է բոլորին՝ թե՛ տղաներին, և թե՛ աղջիկներին, իսկ այն պահպանելու իրավունքը վերապահվում է ծնողներին, «քանի որ չի կարելի երևակայել մի ծնող, որ իր զավակների չարն ուզի: Սակայն, երբեմն, տգիտության և միամտության արդյունքում, այդ անգիտակից շարժումները ծնում են տխուր հետևանքներ» (Պսակ ծայրագույն վարդապետ Խորենյան):

101. Այս ուղեցույցով հնարավորինս ջանացել ենք ընդգծել, որ թե՛ տղա, և թե՛ աղջիկ զավակները համահավասար արժեք են նախևառաջ Արարիչ Աստծու համար, ապա՝ իրենց լույս աշխարհ բերող ծնողների և ողջ հասարակության համար, քանզի հասարակությունը հոգևոր ու բարոյական արժեքների կրող է միայն այն դեպքում, երբ ապրում է հավասարության գիտակցությամբ:

102. Արդարև հասարակությունը ամուր է, երբ ընտանիքներն առողջ են հոգևոր ու բարոյական առումներով: Ընտանիքը խարիսխն է յուրաքանչյուր ժողովրդի: «Ընտանիքը այն միջավայրն է, որ մեր մեծագործ հայրապետներից Մկրտիչ Խրիմյան Վանեցի հայրապետը, անվանել է դրախտի միջավայր, դրախտի ընտանիք: Դա մեր ազգային մտածելակերպի արդյունք է, որովհետև երջանկության, հավիտենության, սիրո փնտռտուքը գտանելի է համերաշխ ընտանիքում: Ընտանիքի համերաշխությունը գալիս է փոխհասկացողությունից, այսինքն՝ այդ արարքի հանդեպ մեր պատասխանատվության զգացումից:

103. Յուրաքանչյուր ընտանիքում կան իրավունքներ և կան պարտականություններ: Իրավունքների դաշտում ամենքը հավասար են, որովհետև Աստված է տվել այդ հավասար հնարավորությունը: Հիսուս Ինքն է ասում. «արդար Աստված անձրև է տեղացնում թե՛ մեղավորների, թե՛ արդարների վրա»: Պողոս առաքյալն էլ վավերացնում է այն ասելով, որ «այլևս Քրիստոսով մենք մեկ ենք», և չկա խտրություն ո՛չ հրեայի, ո՛չ հեթանոսի, ո՛չ տարիքի, ո՛չ սեռի: Ճշմարիտ քրիստոնեական ընտանիքում ընտրության մեջ իրավունքի անհավասարություն գոյություն չունի, բայց գոյություն ունի պարտականությունների, ընկալումների ու կարծիքների տարբերություն և զանազանություն:

104. Սեռով պայմանավորված անարդար և խտրական ընտրության երևույթի դեմ պայքարում են ինչպես պետությունն ու մարդասիրական կազմակերպությունները, այնպես էլ Եկեղեցին, որ իր կարևոր և ազդեցիկ դերակատարությունն ունի հավատացյալներին մտահոգող խնդիրների վերաբերյալ հեղինակավոր կարծիք արտահայտելու և ուղղորդելու առումով: Հոգևորականը՝ քահանան կարող է և պետք է ստանձնի հոգևոր հովվի իր առաքելությունը՝ օգտագործելով վերոգրյալ այն բոլոր հնարավորությունները, որ կարող են օգտագործել մնայուն կապ և հաղորդակցություն հաստատելու համայնքի անդամների հետ: Այս առնչությամբ քահանաները կարող են հատուկ ուշադրություն դարձնել սեռով պայմանավորված խտրական ընտրություն կոչվող երևույթին և ամեն առիթ օգտագործեն՝ խոսելու այս երևույթի պատճառների, աղետալի հետևանքների և կանխելու ուղիների մասին, որոնք հնարավորինս ներկայացված են այս ուղեցույցում: Խնդրի հաղթահարման խնդրով շահագրգիռ բոլոր կողմերի համատեղմամբ միայն աշխատանքը կլինի առավելագույնս օգտավետ, իսկ արդյունքները՝ հուսադրող: Մեկ անգամ ևս շեշտենք, որ երևույթը մատնանշել դեռև չի նշանակում այն կանխել: Մատնանշելն առաջին քայլն է, հաջորդը՝ երևույթի դեմ պայքարելը, լուծումներ գտնելն ու կանխելն է. չէ՞

որ գործուն մասնակցությամբ մենք կարող ենք պաշտպանել բազում անմեղ մանուկների՝ կյանքի աստվածապարգև իրավունքը:

105. Ի վերջո, սեռով պայմանավորված խտրական ընտրության երևույթի առանցքում մարդկային կյանքն է՝ չծնված ու անպաշտպան մի էակի կյանք, որ ունի գոյության, ապրելու և արարելու իրավունք: Հետևաբար այն աշխատանքը, որ միտված է այս երևույթը կանխելուն, աստվածահաճո արարք է և մարդասիրության արտահայտություն, որում առանձնակի կերպով շեշտված է կյանքի փրկության գիտակցությունը: Լիահույս ենք, որ այս ուղեցույցը, որ կոչված է նվիրական այդ աշխատանքի մասնիկը լինելուն, իր նպաստը կբերի սեռով պայմանավորված խտրական ընտրության խոտելի երևույթից զերծ՝ առողջ ու ամուր հասարակություն կերտելու առաքելությանը:

«Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրն իրականացվում է 2015 թվականի մայիսից, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից, Սեյվ դը չիլդրեն նեդերլենդի, Արմավիրի զարգացման կենտրոնի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի և Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հետ համագործակցությամբ: Այն ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, որի ներդրումը կազմում է շուրջ 750,000 եվրո:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը:

Եվրահանձնաժողովը Եվրոպական միության գործադիր մարմինն է

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ-պետություններից, որոնք որոշել են միակցել իրենց նորարարական մոտեցումները, ռեսուրսներն ու ճակատագրերը: Հիսունամյա ծավալման արդյունքում նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման մի միջավայր, որտեղ պահպանվում է մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունն ու անձի ազատությունը: Եվրոպական միությունը պարտավորություն է ստանձնել՝ կիսելու նվաճումներն ու արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրների ու իր սահմաններից դուրս բնակվող ժողովուրդների հետ»:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: